# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
# Մ Ա Ր Զ Պ Ե Տ

**ք. Եղեգնաձոր, Շահումյան 5** **Հեռ. (+374281) 2 25 22**

**«30» «12» 2024թ.** **N 01/11.3/8372-2024**

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՁՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ**
**ՈՒՍԱՆՈՂ-ԼՐԱԳՐՈՂ ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ տիկին Ավետիսյան**

Ի պատասխան Ձեր 2024 թվականի դեկտեմբերի 23-ի հարցմանը՝ մարզի համայնքներում (բնակավայրերում) կոյուղատար համակարգերի առկայության և թափվող կոյուղաջրերի վերաբերյալ հարցը քննարկվել է համայնքների համապատասխան մասնագետների հետ:

Ձեզ է ներկայացվում համայնքներից ստացված ամփոփ տեղեկատվությունը: Ջերմուկ քաղաքում կոյուղատար համակարգը սպասարկում և տնօրինում է <<ՎԵՈԼԻԱ ՋՈՋՈՒՐ>> ՓԲ ընկերությունը:Կեչուտ բնակավայրում գործում է կոյուղատար համակարգ, սակայն առկա չէ կեղտաջրերի մաքրման կայան: Խորհրդային տարիներից կեղտաջրերը լցվում են Կեչուտի ջրամբար:Գնդեվազ բնակավայրը ունի գործող կոյուղատար համակարգ, սակայն բնակավայրում առկա չէ կոյուղաջրերի մաքրման կայան, կոյուղաջրերը կուտակվում ենբնակավայրի վերջնամասում այդ նպատակի համար փորված ավազանում, որտեղից վերջնարդյունքում թափվում են Արփայի կիրճ և լցվում Արփա գետ:

Վայք համայնքի գյուղական բնակավայրերում առկա չեն կոյուղատար համակարգեր:

Վայք քաղաքում գործում է կոյուղատար համակարգ, բայց բացակայում է մաքրման կայանը: Վայք քաղաքի կոյուղաջրերը թափվում են Արփա գետ:

Վայք քաղաքում կոյուղատար համակարգը սպասարկում է <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲ ընկերությունը:

Եղեգնաձոր համայնքում առկա է կոյուղաջրերի բիոմաքրման մեկ կայան: Նախատեսվում է կառուցել ևս մեկը՝ ավելի մեծ հզորությամբ:

Կոյուղու ցանցը կառուցվել է 1970-ական թվականներին և ներկայումս սպասարկվում է <<ՎԵԼՈՒԱ ՋՈՒՐ>> ՓԲ ընկերության կողմից:

Եղեգիս համայնքի բնակավայրերում չկա կենտրոնացված կոյուղու համակարգեր, ուսի բոլոր բնակավայրերը օգտվում են կառուցված անհատական սեպտիկ հորերից:

Առաջիկա տարիներին նախատեսվում է բնակավայրերում առաջնահերթության կարգով կառուցել կոյուղու համակարգեր և մաքրման կայաններ:

Արենի համայնքի բնակավայրերից մասամբ կենտրոնացված կոյուղու համակարգեր ունեն Ռինդ, Աղավնաձոր, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերը: Արենի բնակավայրի կոյուղագիծը և մաքրման կայանը դեռևս չեն շահագործվում, գտնվում են կառուցման փուլում:

Մնացած բոլոր բնակավայրերը (Գնիշիկ, Ելփին, Խաչիկ) և վերոնշյալ բնակավայրերի մի մասը միացված չեն կենտրոնացված կոյուղու համակարգերին և օգտվում են անհատական սեպտիկ հորերից:

Աղավնաձոր, Արփի, Ագարակաձոր և Ռինդ բնակավայրերի կոյուղաջրերը թափվում են սեպտիկ հորեր, իսկ Չիվա բնակավայրի համար 2024 թվականին կառուցվել է մաքրման կայան, որը գտնվում է ավարտական փուլում , դեռևս չի շահագործվում:

Մաքրման կայաններ չունեցող բնակավայրերի համար առաջիկա տարիներին նախատեսվում է սուբվենցիոն ծրագրերով կառուցել կայաններ:

2024 թվականին շահագործման է հանձնվել Արենի բնակավայրի մանկապարտեզի մաքրման կայանը, որի արդյունքում մաքրված ջրերը լցվում են

Արփա գետ: Արենի համայնքի կոմունալ տնտեսությունը սպասարկում է համայնքային ենթակայության <<Արենի>> ՀՈԱԿ-ը:

Կից ներկայացվում է համայնքներից ստացված գրությունները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

2024-12-30 15:09:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Հարգանքով՝** **Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Կատարող՝ Գ. Մարգարյան
Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության
և շրջակա միջավայրի պահպանության
վարչության պետ
Հեռ: +374281-23050
Էլ-փոստ՝ vayotsdzor.gyugh@mta.gov.am